ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների համեմատական վերլուծություն

25.01.2021թ.
ՌԳՍՊՎԳ վարչություն

Դպրոցների կրթական գործընթացի որակի գնահատման արդյունքների համեմատական վերլուծություն

	Բովանդակություն	Էջը
1.	Նախաբան	1
2.	Կրթության որակի գնահատման գործիքակազմ	5
3.	Վերլուծության մեթոդաբանություն	7
4.	Չափանիշ 1. Սովորողների գրավոր աշխատանքների արդյունքներ	8
5.	Չափանիշ 2. Ուսուցիչներ	12
6.	Չափանիշ 3. Տնօրեն	18
7.	Չափանիշ 4. Կառավարման խորհուրդ	24
8.	Չափանիշ 5. Ուսումնական միջավայր	28
9.	«Ծնողի հարցաթերթիկի» արդյունքների վերլուծություն	33
10.	Եզրակացություն	40
11.	Առաջարկություններ	46

Նախաբան

ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ՝ նաև ԿՏՄ) առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման ու անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջներով՝ ստուգումներ է իրականացնում ստուգաթերթերով, որոնք ներառում են ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների սպառիչ ցանկը՝ համապատասխան կշռային միավորներով: Սակայն, միայն օրենսդրության պահանջների արձանագրումը և ըստ ստուգաթերթերի ռիսկայնության գնահատումը հնարավորություն չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել կրթության որակի և հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում առկա խնդիրների մասին: Մինչդեռ, ԿՏՄ-ի նպատակը ոչ միայն կրթության բնագավառի օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, այլև՝ կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցելը: Այդ հիմնավորումով էլ 2020 թվականին հանրակրթության ոլորտում իրականացվող ստուգումների շրջանակում ԿՏՄ-ն սկսեց կիրառել

նախապես մշակված կրթության որակի գնահատման գործիքակազմը (այսուհետ՝ նաև ձևաթղթեր):

Համաձայն 2020 թվականի գործունեության ծրագրի՝ նախատեսված էր ձևաթղթերը կիրառել ստուգումների տարեկան ծրագրում ընդգրկված բոլոր դպրոցներում, սակայն, Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված սահմանափակումների պատճառով այն կիրառվել է միայն 2020 թվականի I եռամսյակում ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամաններով ստուգված ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ, Գյումրու հ. 37 ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ, ՀՀ Արմավիրի մարզի Արևիկի միջնակարգ, Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան միջնակարգ, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմնական, Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան հ. 21 հիմնական, հ.22 հիմնական և ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում (այսուհետ՝ նաև ուսումնական հաստատություն):

Կրթական գործընթացի գնահատման ընթացքում գնահատվել են կառավարման խորհրդի (այսուհետ՝ նաև խորհուրդ), տնօրենի գործունեությունը, «Հայոց լեզու», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչները, ուսումնական միջավայրը: Գնահատման համար կիրառվել է «Գերազանց», «Շատ լավ», «Լավ», «Բավարար», «Անբավարար» սանդղակը:

Խորհուրդների գործունեության գնահատման արդյունքում գրանցված ցուցանիշները գնահատված դպրոցներում «Լավ» կամ «Բավարար» են, բացառությամբ՝ «Անբավարար» գնահատված Մուսալեռի միջնակարգ դպրոցի: Գնահատման արդյունքները վկայում են խորհուրդների կրթության որակին նպաստելու ուղղությամբ պասիվ գործունեության վերաբերյալ:

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում գրանցված ցուցանիշներն են հիմնականում՝ «Լավ» և «Բավարար», ինչը ենթադրում է, որ կրթական գործընթացի կազմակերպման որակն ունի բարելավման կարիք բոլոր գնահատված դպրոցներում:

Ուսուցիչները գնահատման արդյունքում հիմնականում գրանցել են միջինից բարձր արդյունքներ, մինչդեռ այդ արդյունքները բավարար չեն կրթության բարձր որակ ապահովելու համար: Այդ մասին են վկայում սովորողների գիտելիքների գրանցված արդյունքները:

Վերոնշյալ 9 դպրոցներում սովորողների մնացորդային գիտելիքները ստուգվել են «Հայոց լեզու» առարկայի թելադրության և «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջոցով: Գրավոր աշխատանքներն ընտրվել են նախորդ դասարանի անցած նյութին

համապատասխան: «Մաթեմատիկա» առարկայի առաջադրանքները կազմվել են ՀՀ ԿԳՄՍՆ Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետ՝ ԳԹԿ) կողմից, «Հայոց լեզու» առարկայից տրվել է թելադրություն: Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ տրվել են VII–IX դասարաններում, միջնակարգ դպրոցներում՝ VII–XI, իսկ ավագ դպրոցներում՝ XI դասարաններում: Միաժամանակ, ուսումնասիրվել են նաև նույն սովորողների նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները:

«Հայոց լեզու» առարկայի թելադրության միջին գնահատականը 5 միավոր է (10 միավորային սանդղակում): Ստորև ներկայացված է «Հայոց լեզու» թելադրության %-ային պատկերն ըստ դասարանների: Ինչպես արտահայտված է դիագրամում, «անբավարար» գնահատված սովորողների %-ն աճում է դասարանների բարձրացման հետ համատեղ.



Համեմատվել են «Հայոց լեզու» թելադրության և նույն սովորողների նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները: Համադրումը ներկայացված է ստորև բերված դիագրամում.



Ինչպես արտահայտված է դիագրամում, ուսուցիչները հակված են գնահատականները շռայլել ցածր առաջադիմությամբ սովորողներին: Թելադրությունից և նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից «Գերազանց» գնահատված սովորողների %-ային թվերը քիչ են տարբերվում:

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը 4 միավոր է: Ստորև ներկայացված է «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի %-ային պատկերն ըստ դասարանների.



Համեմատվել են «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի և նույն սովորողների նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների արդյունքները: Համադրումը ներկայացված է ստորև բերված դիագրամում.



Պատկերը հակասական է «Անբավարար» գնահատականների պարագայում:

Հաշվի առնելով այն պահանջը, որ 10 միավորային սանդղակում դրական է համարվում «4» միավորը, կարող ենք ասել, որ ուսումնասիրված առարկաներից գնահատված դպրոցներն ունեն իրենց ուսուցման որակը բարձրացնելու խիստ անհրաժեշտություն, քանի որ որոշ դեպքերում գրավոր աշխատանքների միջին ցուցանիշը ստացվել է 4-ից՝ պարտադիր նվազագույնից ցածր:

Կարևոր է նշել, որ երկու առարկաների դեպքում էլ մնացորդային գիտելիքների արդյունքները խնդրահարույց են ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցներում:

Ստուգումների ընթացքում բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

Կրթության որակի գնահատման գործիքակազմ

Կրթության որակը՝ ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության համաձայն՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք է, որը գնահատվում է՝ հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման

ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների:

ԿՏՄ կողմից մշակված կրթության որակի գնահատման գործիքակազմի (այսուհետ՝ ձևաթուղթ) համար նույնպես հիմք են հանդիսացել վերոնշյալ սահմանման մեջ առկա բաղադրիչները: Մասնավորապես.

✓ սովորողի անհատական կարիքներ (հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ պայմաններ).

✓ կրթության կազմակերպման գործընթաց (բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական և վարչական համակազմ).

✓ ուսուցման ծրագրային բովանդակություն (կրթական չափորոշիչներ, առարկայական ծրագրեր).

✓ կրթության կազմակերպման միջավայր (շենքային պայմաններ, ուսումնական միջավայր, կրթական պաշարներ, ուսումնական գրականություն).

✓ ուսումնառության գնահատված արդյունքներ (սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատում, հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում, մնացորդային գիտելիքների գնահատման արդյունքներ).

✓ կառավարում (կառավարման խորհուրդ, տնօրեն):

Ձևաթուղթը բաղկացած է «Տնօրեն», «Կառավարման խորհուրդ», «Ուսուցիչ», «Ուսումնական միջավայր» հավելվածներից, ինչպես նաև «Սովորողի կողմից ուսուցչի գործունեության գնահատման հարցաթերթ»-ից և «Ծնողի հարցաթերթիկ»-ից: Գնահատվել են դպրոցի տնօրենի, կառավարման խորհրդի գործունեությունը, «Հայոց լեզու», «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչները, ուսումնական միջավայրը:

Կառավարման խորհրդի գնահատման համար ձևաթղթում ընտրված բնութագրիչները բխում են դպրոցի կառավարման խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթներից:

Տնօրենի գնահատման համար ձևաթղթում ընտրված բնութագրիչները վերաբերում են միայն հաստատությունում կրթության որակին:

Ուսումնական հաստատությունում կրթության որակի գնահատման գործընթացի բաղկացուցիչ մաս է հանդիսանում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգումը՝ նախապես ընտրված առարկաներից: Վերջինս իրականացվում է ԿՏՄ կողմից տրվող գրավոր աշխատանքների միջոցով: Այդ աշխատանքների արդյունքները գնահատման չափանիշ են ընտրվել և «Ուսուցիչ», և «Տնօրեն» հավելվածներում:

Վերլուծության մեթոդաբանություն

Ուսումնական հաստատությունների գնահատման արդյունքները համեմատվել և վերլուծվել են համեմատության հիերարխիկ (աստիճանակարգային) վերլուծության մեթոդով[1], որի նպատակը կրթության որակի գնահատումն է՝ դպրոցների՝ ըստ չափանիշների համեմատության և հիերախիայի միջոցով:

Պարզագույն հիերարխիան բաղկացած է երեք մակարդակից՝ նպատակ, չափանիշներ, այլընտրանքներ: Մինչ վերլուծության իրականացումը նախ սահմանվում է նպատակը, ընտրվում են չափանիշները: Մեր դեպքում վերլուծության նպատակը իրականացված գնահատման արդյունքների համաձայն ուսումնական հաստատության կրթության որակի գնահատումն է, ինչպես նաև կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատումը այլ գնահատված ուսումնական հաստատությունների նկատմամբ, իսկ այլընտրանքներն են՝ գնահատված ուսումնական հաստատությունները:

Համեմատական վերլուծության չափանիշներն են՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Ուսուցիչ», «Ուսումնական միջավայր», «Սովորողների գրավոր աշխատանքների արդյունքներ»: Ձևաթղթերում առկա «Սովորողի կողմից ուսուցչի գործունեության գնահատման հարցաթերթ»-ի, «Ծնողի հարցաթերթիկ»-ի արդյունքները չեն ներառվել վերլուծության ընդհանուր բաղադրիչներում:

Թվային տվյալների մշակման գործընթացն իրականացվել է հետևյալ փուլերով:

Նախ վերոնշյալ չափանիշներին վերագրվել են կշիռներ ըստ հիերարխիայի, այսինքն՝ կշիռները սահմանվել են ըստ չափանիշի կարևորության աստիճանի, որը մեթոդի հիմնական առանձնահատկությունն է: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է կրթական գործընթացի ուսումնասիրության աստիճանակարգային մոդելը և համապատասխան կշիռներն՝ ըստ չափանիշների կարևորության:

[1] **Thomas L. Saaty "Analytic Hierarchy Process" 1979**

Չափանիշներ՝ ըստ կարևորության	*Կարևորության գործակից*	*Կշիռ*
Հայոց լեզվի թելադրության միջին գնահատականներ	*1*	*24.9*
Մաթեմատիկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականներ	*1*	*24.9*
Հայոց լեզվի ուսուցիչների գնահատման արդյունքներ	*2*	*12.4*
Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքներ	*2*	*12.4*
Տնօրեն	*2*	*12.4*
Կառավարման խորհուրդ	*3*	*8*
Ուսումնական միջավայր	*5*	*5*

Այնուհետև, համեմատվել են ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ ըստ վերոնշյալ չափանիշների, ապա՝ համադրելով նշված փուլերի արդյունքները, ստացվել է հաստատություններից յուրաքանչյուրի գնահատականը՝ կրթության որակի և կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության մասով:

Չափանիշ 1. Սովորողների գրավոր աշխատանքների արդյունքներ

Սովորողների ձեռքբերումները (նախորդ տարվա մնացորդային գիտելիքները) «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների շրջանակներում ստուգելու նպատակով համապատասխանաբար կիրառվել են «Թելադրություն» (հայոց լեզու) և «Գրավոր առաջադրանքներ» (մաթեմատիկա) գործիքները: Վերլուծության համար հիմք են հանդիսացել գրավոր աշխատանքների արդյունքները:

- **Հայոց լեզվի թելադրության արդյունքներ**

Սովորողների հայոց լեզվի թելադրության արդյունքների ամենաբարձր միջին ցուցանիշը գրանցվել է Բյուրեղավանի հիմնական դպրոցում (6,9), իսկ ամենացածրը՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում (3,6): «Հայոց լեզու» առարկայի թելադրությունից սովորողների միջին գնահատականների պատկերն ըստ ուսումնական հաստատությունների արտահայտված է ստորև բերված դիագրամում (տե՛ս գծապատկեր 1).



Այնուհետև, կազմվել է նշված միջին գնահատականների համեմատական պատկերն ըստ հաստատությունների՝ միջին գնահատականները համեմատվել են, որից հետո նորմավորվել (տե՛ս գծապատկեր 2).



- **Մաթեմատիկայի գրավոր աշխատանքների արդյունքներ**

Մաթեմատիկայի գրավոր աշխատանքների համար հիմք է հանդիսացել ԳԹԿ-ի կողմից տրամադրված առաջադրանքների փաթեթը: Սովորողների մաթեմատիկայի գրավոր աշխատանքների արդյունքների ամենաբարձր միջին ցուցանիշը գրանցվել է Երևանի հ. 21 հիմնական դպրոցում (4,6), իսկ ամենացածրը՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում (2,7):

Արդյունքներն ըստ հաստատությունների՝ դիագրամի տեսքով ներկայացված են գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3

Մաթեմատիկայի գրավոր աշխատանքների արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 4).



Գծապատկեր 4

«Հայոց լեզու» թելադրությանը մասնակցած 1004 սովորողներից «Անբավարար» են գնահատվել 355-ը (35%), «Բավարար»՝ 293-ը (29%), «Լավ»՝ 248-ը (25%), «Գերազանց»՝ 108-ը (11%) (տե՛ս գծապատկեր 5):



Գծապատկեր 5

«Հայոց լեզու» առարկայի թելադրության միջին գնահատականը 5 միավոր է:

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքին մասնակցած 959 սովորողներից «Անբավարար» են գնահատվել 454-ը (47%), «Բավարար»՝ 364-ը (38%), «Լավ»՝ 97-ը (10%), «Գերազանց»՝ 44-ը (5%) (տե՛ս գծապատկեր 6):



Գծապատկեր 6

«Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը 4 միավոր է:

Կարևոր է նշել, որ ՀՀ Արմավիրի մարզի նշված դպրոցների բոլոր դասարաններում միջին գնահատականը կազմել է 4 միավորից ցածր («Անբավարար»): Հետաքրքրական է այն փաստը, որ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի սովորողները (4 սովորող) «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքից ստացել են

«անբավարար», մինչդեռ «Հայոց լեզու» առարկայի թելադրությունից նրանցից ոչ մեկը «անբավարար» չի ստացել:

Հաշվի առնելով այն պահանջը, որ 10 միավորային սանդղակում դրական է համարվում «4» միավորը, կարող ենք ասել, որ ուսումնասիրված առարկաներից ստորև նշված դպրոցներն ունեն իրենց ուսուցման որակը բարձրացնելու խիստ անհրաժեշտություն, քանի որ գրավոր աշխատանքների միջին ցուցանիշը ստացվել է 4-ից՝ պարտադիր նվազագույնից ցածր.

- «Հայոց լեզու»՝ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի և Արևիկի միջնակարգ դպրոցներ,
- «Մաթեմատիկա»՝ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի, Արևիկի միջնակարգ, ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի միջնակարգ և Գյումրու հ. 37 ավագ դպրոցներ:

Կարևոր է նշել, որ երկու առարկաների դեպքում էլ մնացորդային գիտելիքների արդյունքները խնդրահարույց են ՀՀ Արմավիրի մարզի ստուգված դպրոցներում:

Չափանիշ 2. Ուսուցիչներ

Այս չափանիշի համար հիմք են հանդիսացել ձևաթղթի «Ուսուցիչ» հավելվածի գնահատման արդյունքները: Նշված հավելվածով ուսումնական հաստատություններում գնահատվել են «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչները: Վերլուծության համար որպես չափանիշ կիրառվել են դպրոցների «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների ուսուցիչների միջին գնահատականները:

Ուսուցիչների գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

➢ ուսուցչի դասավանդած դասարաններում սովորողների առաջադիմության աճի կամ նվազման դինամիկան (համեմատվում են նախորդ երկու կիսամյակների ցուցանիշների տոկոսային թվերը).

➢ ավարտման ցուցանիշ՝ ըստ կրթական աստիճանների (հիմք են ընդունվել նախորդ ուստարում ուսուցչի դասավանդած դասարաններում սովորողների՝ տվյալ առարկայի ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքները).

➢ ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքներ (գնահատումն իրականացվել է ըստ «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թվի).

➢ առարկայի որակի ցուցանիշը (համեմատվել են ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների և նախորդ

կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած այն դասարանների սովորողների միջին տոկոսային թվերը, որտեղ դասավանդել է տվյալ ուսուցիչը).

➢ տվյալ ուսուցչի աշակերտների հաջողությունները այդ առարկայի օլիմպիադաներից (մարզային, հանրապետական, միջազգային).

➢ ուսուցչի գիտամանկավարժական գործունեությունը (գիտական, մանկավարժական հոդվածների առկայություն).

➢ ուսուցչի մասնագիտական ակտիվությունը (կրթական կոնֆերանսներին, համաժողովներին, ծրագրերին մասնակցություն):

Ուսուցիչները գնահատվել են գնահատման հետևյալ սանդղակով. 150-135 միավոր՝ «Գերազանց», 134-107՝ «Շատ լավ», 106-66 ՝ «Լավ», 65-30՝ «Բավարար», մինչև 30՝ «Անբավարար»:

- **Հայոց լեզվի ուսուցիչների գնահատման արդյունքներ**

Հայոց լեզվի ուսուցիչների գնահատման արդյունքում ամենաբարձր միջին ցուցանիշը գրանցվել է Բյուրեղավանի հիմնական դպրոցում (98.75), իսկ ամենացածրը՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում (55,5): Գնահատման արդյունքներն (ըստ դպրոցների) դիագրամների տեսքով ներկայացված են գծապատկեր 7-ում:



Գծապատկեր 7

Ուսուցիչների գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

➢ նախորդ ուստարում բոլոր ուսուցիչների դասավանդած դասարաններում «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը կազմել է 50%-ից բարձր (բարձր ցուցանիշ) Երևանի հ. 21, հ.22, Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի

միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում: Այս ցուցանիշը ոչ բոլոր ուսուցիչների մոտ է կազմել 50%-ից բարձր՝ Ամասիայի միջնակարգ դպրոցում: Նշված ցուցանիշը կազմել է 40%-50% (միջին ցուցանիշ) Մուսալեռի միջնակարգ դպրոցում, մինչև 39% (ցածր ցուցանիշ)՝ Արևիկի միջնակարգ դպրոցում:

- ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ նվազել է Գյումրու թիվ 37 ավագ դպրոցում, ընդհանուր առմամբ նվազել է՝ Երևանի հ. 22 հիմնական, Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, աճել է՝ Երևանի հ. 21 հիմնական, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, ընդհանուր առմամբ աճել է Բյուրեղավանի հիմնական, Արևիկի, Ամասիայի միջնակարգ դպրոցներում:
- «Հայոց լեզու» առարկայի ավարտական քննությունից «Անբավարար» ստացած սովորողներ են եղել Բյուրեղավանի, Երևանի հ. 21 հիմնական դպրոցներում, պետական ավարտական քննությունից՝ Գյումրու թիվ 37, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:
- ստուգման ընթացքում տրված թելադրությունից ուսուցիչների դասավանդած դասարաններում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը կազմել է մինչև 30% Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, մինչև 40%՝ Երևանի հ. 21, հ.22 հիմնական, Ամասիայի, Արևիկի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ, 41%-ից ավելի՝ Մուսալեռի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում: Ըստ ուսուցիչների գնահատման հավելվածի՝ ուսուցիչների դասավանդած դասարաններում ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը մինչև 30% կազմելը համարվել է բարձր ցուցանիշ, 31%-40%-ի դեպքում՝ միջին ցուցանիշ, 41%-ից մեծ լինելու դեպքում՝ ցածր ցուցանիշ:
- ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից **«Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատված սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ** (որտեղ տրվել են գրավոր աշխատանքներ և դասավանդել են նշված մասնագետները) **աճել է Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, նվազել է՝ Գյումրու թիվ 37, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Երևանի հ. 22 հիմնական, Արևիկի, Ամասիայի միջնակարգ դպրոցներում:**

➢ «Հայոց լեզու» առարկայի ուսուցիչների դասավանդած դասարանների սովորողներից օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցած սովորողները մարզային փուլ չեն անցել Բյուրեղավանի հիմնական դպրոցում: Մարզային փուլ են անցել, սակայն հաջողություն չեն ունեցել՝ Երևանի հ. 21, հ. 22 հիմնական, Արևիկի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում, մարզային փուլում հաջողություն են ունեցել՝ Գյումրու թիվ 37 ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում: Տարածքային, հետևաբար նաև մարզային փուլի մասնակիցներ չեն եղել Մուսալեռի և Ամասիայի միջնակարգ դպրոցներում:

➢ գիտամանկավարժական հոդված ունեցող ուսուցիչներ կան Երևանի հ. 21, Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի, Արևիկի միջնակարգ, Գյումրու թիվ 37, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:

➢ ուսուցիչները մասնակցել են կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների Երևանի հ. 21 հիմնական, Արևիկի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:

Հայոց լեզվի ուսուցիչների գնահատման միջին արդյունքները հիմնականում «Շատ լավ», և «Լավ» են. որոշ դպրոցների դեպքում նկատելի է ուղղակի կապ հայոց լեզվի ուսուցիչների գնահատման և սովորողների հայոց լեզվի թելադրության արդյունքների միջև (Բյուրեղավանի հ/դ, Սառնաղբյուրի մ/դ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ա/դ, Մուսալեռի մ/դ):

Հայոց լեզվի ուսուցիչների գնահատման արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 8).



Գծապատկեր 8

- **Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքներ**

Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքում ամենաբարձր միջին ցուցանիշը գրանցվել է Երևանի ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում (90,00), իսկ ամենացածրը՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում (27,50):

Գնահատման արդյունքները դիագրամի տեսքով ներկայացված են գծապատկեր 9-ում:



Գծապատկեր 9

Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

➢ նախորդ ուստարում բոլոր ուսուցիչների դասավանդած դասարաններում «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը կազմել է 50%-ից բարձր Գյումրու թիվ 37 ավագ, Երևանի հ.22 հիմնական դպրոցներում: Այս ցուցանիշը որոշ դպրոցների ուսուցիչների մի մասի մոտ կազմել է 50 %-ից բարձր, մյուս մասի մոտ՝ միջին և ցածր (40-50 %, 39%). դրանք են՝ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ (50%, 39%), Բյուրեղավանի հիմնական (40-50%, 39%), Երևանի հ. 21 հիմնական (40-50%, 39%), Սառնաղբյուրի միջնակարգ (50 %, 39 %) դպրոցները: Ամասիայի միջնակարգ դպրոցում նշված ցուցանիշը կազմել է 40%-50%, Մուսալեռի և Արևիկի միջնակարգ դպրոցներում՝ մինչև 39%:

➢ ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ նվազել է Երևանի հ. 22 հիմնական, Սառնաղբյուրի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում, ընդհանուր առմամբ նվազել է՝ Ամասիայի միջնակարգ դպրոցում, աճել է՝ Երևանի հ. 21 հիմնական, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում, ընդհանուր առմամբ աճել է Բյուրեղավանի հիմնական, Արևիկի, Մուսալեռի միջնակարգ դպրոցներում:

- «Մաթեմատիկա» առարկայի ավարտական քննությունից «Անբավարար» ստացած սովորողներ եղել են միայն Բյուրեղավանի հիմնական և Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում:
- Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքից ուսուցիչների դասավանդած դասարաններում «անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը կազմել է մինչև 30% (բարձր ցուցանիշ) Երևանի հ. 21 հիմնական դպրոցներում, մինչև 40% (միջին ցուցանիշ)՝ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ, **41%-ից ավելի՝ Երևանի հ. 22 հիմնական, Բյուրեղավանի հիմնական, Ամասիայի, Արևիկի, Մուսալեռի միջնակարգ, Գյումրու հ. 37 ավագ դպրոցներում:**
- **Ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատված դասարանների սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ նվազել է՝ բոլոր 9 դպրոցներում:**
- «Մաթեմատիկա» առարկայի օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցել են, սակայն մարզային փուլ չեն անցել Բյուրեղավանի հիմնական, Արևիկի և Ամասիայի միջնակարգ դպրոցների գնահատված ուսուցիչների դասավանդած դասարանների սովորողները: Մարզային փուլում հաջողություն են ունեցել Գյումրու թիվ 37 ավագ, Երևանի հ. 21 հիմնական, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցների գնահատված ուսուցիչների սովորողները: Տարածքային, հետևաբար նաև մարզային փուլի մասնակիցներ չեն ունեցել ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Մուսալեռի և Ամասիայի միջնակարգ դպրոցները:
- Գիտամանկավարժական հոդված ունեցող ուսուցիչներ կան Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի, Արևիկի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:
- Ուսուցիչները մասնակցել են կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների Սառնաղբյուրի, Արևիկի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:

Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 10).



Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքում 50 %-ից ավելի դպրոցներում գրանցվել է «Բավարար» (Բյուրեղավանի հ/դ, Երևանի հ.22 հ/դ, Արևիկի մ/դ, Ամասիայի մ/դ,) և «Անբավարար» (Մուսալեռի մ/դ) ցուցանիշները, ինչն էապես կարող է ազդել մաթեմատիկայի ուսուցման որակի վրա: Ուսուցիչների գնահատման և սովորողների գրավոր առաջադրանքների արդյունքները միջին ցուցանիշներով բոլոր դպրոցներում համապատասխանում են, բացառությամբ Գյումրու հ.37 ավագ դպրոցի, որտեղ սովորողների գրավոր աշխատանքների միջին գնահատականը 3.8 է («Անբավարար»), իսկ ուսուցիչների գնահատման միջին արդյունքը՝ 75.5 («Շատ լավ»):

Չնայած ուսուցիչները գնահատման արդյունքում հիմնականում գրանցել են միջինից բարձր արդյունքներ, այնուամենայնիվ, դպրոցները պարտավոր են նպաստել նրանց ինքնազարգացմանն ու մասնագիտական աճին՝ պայմանավորված նրանց անհատական մասնագիտական կարիքներով և սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքներով, իսկ Մուսալեռի դպրոցում այս խնդիրն ավելի հրատապ է՝ կախված թե՛ ուսուցիչների գնահատման, թե՛ սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքներով:

Չափանիշ 3. Տնօրեն

Այս չափանիշի համար հիմք են հանդիսացել ձևաթղթի «Տնօրեն» հավելվածի գնահատման արդյունքները: Դպրոցի տնօրենի գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

- «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ ուստարում (բարձր ցուցանիշ՝ 50%-ից բարձր, միջին ցուցանիշ՝ 40%-50%, ցածր ցուցանիշ՝ մինչև 39%).
- Առաջադիմության աճի կամ նվազման դինամիկան (համեմատվել են նախորդ երկու կիսամյակների ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թվերը).
- Ավարտման ցուցանիշ՝ ըստ կրթական աստիճանների (հիմք են ընդունվել նախորդ ուստարում դպրոցի սովորողների ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունքները).
- Դպրոցից բուհ անցման ցուցանիշ (հիմք է ընդունվել քննություններին (միասնական, բուհական, միջազգային) մասնակցածների և բուհեր ընդունվածների տոկոսային հարաբերակցությունը, ինչպես նաև միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների տոկոսային թիվը միասնական քննություններին մասնակցած սովորողների թվի նկատմամբ).
- Հաճախելիության ցուցանիշ (հիմք է ընդունվել նախորդ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ կամ 200 ժամից ավելի բացակայած սովորողների տոկոսային համամասնությունը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ).
- Մնացորդային գիտելիքների ստուգման ցուցանիշ (հիմք է ընդունվել ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար», «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային հարաբերակցությունը).
- Գնահատման որակի ցուցանիշ (համեմատվել են ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների և նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվերը).
- Առարկայական օլիմպիադաներին մասնակցության ցուցանիշ (հիմք է ընդունվել առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած մասնակիցների տոկոսային թիվը՝ տարածքային փուլին մասնակցած սովորողների թվի նկատմամբ).
- Տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերման ցուցանիշ (հիմք է ընդունվել առարկայական օլիմպիադաներում հաղթող և (կամ) խրախուսված մասնակիցներ ունենալը).

➢ Ուսուցիչների գնահատման ցուցանիշ (հիմք է ընդունվել ստուգման ընթացքում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչների տոկոսային թիվը գնահատված ուսուցիչների թվի նկատմամբ).

➢ Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ցուցանիշ (հիմք է ընդունվել ստուգման արդյունքում կազմված ակտը կամ տեղեկանքը):

Տնօրենները գնահատվել են հետևյալ սանդղակի համաձայն. 330-270 միավոր՝ «Գերազանց», 269-189՝ «Շատ լավ», 188-101 ՝ «Լավ», 100-30 ՝ «Բավարար», մինչև 30՝ «Անբավարար»:

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Բյուրեղավանի հիմնական դպրոցում (179), իսկ ամենացածրը՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում (93): Արդյունքները դիագրամի տեսքով ներկայացված են գծապատկեր 11-ում:



Գծապատկեր 11

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

➢ «Լավ» (7-8) և «Գերազանց» (9-10) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը (նախորդ ուստարում) մինչև 39% (ցածր) կազմել է ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան և Գյումրու հ. 37 ավագ, Արևիկի և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, 41-50 % (միջին) կազմել է Երևանի հ.21 հիմնական (47 %), Սառնաղբյուրի միջնակարգ (41 %) դպրոցներում, իսկ 50 %-ից բարձր կազմել է Բյուրեղավանի հիմնական, Երևանի հ. 22 հիմնական և Ամասիայի միջնակարգ դպրոցներում:

➢ Ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ, երկրորդում նվազել է (գնահատվել է բարձր) ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Երևանի հ.21 հիմնական, Բյուրեղավանի հիմնական, Արևիկի, Ամասիայի և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, և աճել է Գյումրու հ.37 ավագ, Սառնաղբյուրի միջնակարգ, Երևանի հ. 22 հիմնական դպրոցներում:

➢ Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***3-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են պետական ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) Մուսալեռի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Գյումրու հ. 37 ավագ դպրոցներում: Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***2-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) Երևանի հ. 21, Բյուրեղավանի հիմնական, Մուսալեռի, Սառնաղբյուրի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում:

➢ Քննություններին (միասնական, բուհական, միջազգային) մասնակցած սովորողներից «Անբավարար» են ստացել 20%-ից ավելին՝ Արևիկի միջնակարգ դպրոցում, մինչև 20%-ը Սառնաղբյուրի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում, մինչև 5 %-ը ՝ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում, «Անբավարար» ստացած սովորողներ չեն եղել Ամասիայի, Մուսալեռի միջնակարգ դպրոցներում:

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է մինչև 1% (բարձր ցուցանիշ)՝ Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցում, գտնվել է 2-5% (միջին ցուցանիշ) միջակայքում՝ Մուսալեռի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում, 5%-ից ավելի՝ Երևանի հ. 21 հիմնական դպրոցում: 120-200 ժամ բացակայած սովորողներ չեն եղել Երևանի հ. 22, Բյուրեղավանի հիմնական, Ամասիայի, Արևիկի միջնակարգ դպրոցներում:

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ գտնվել է 1-3% միջակայքում՝ Երևանի հ.հ. 21, 22 հիմնական, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում: 200 ժամից ավելի բացակայություններ ունեցող սովորողներ չեն եղել Բյուրեղավանի հիմնական, Արևիկի, Ամասիայի, Սառնաղբյուր, Մուսալեռի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում:

➢ Ստուգման ընթացքում տրված «Հայոց լեզվի» թելադրության արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է **41%-ից ավելի (ցածր ցուցանիշ) ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Արևիկի և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, մինչև 30%՝ մնացած դպրոցներում:**

➢ Ստուգման ընթացքում տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է **մինչև 30 %՝ Երևանի հ. 21 հիմնական դպրոցում, 31-40% (միջին ցուցանիշ)՝ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ և Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, 41 %-ից ավելի՝ մնացած դպրոցներում:**

➢ Ստուգման ընթացքում տրված «Հայոց լեզվի» գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել **է մինչև 30% (ցածր ցուցանիշ) ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Մուսալեռի և Արևիկի միջնակարգ դպրոցներում, 31-40 % (միջին ցուցանիշ)՝ Սառնաղբյուրի (39 %) և Ամասիայի (32 %) միջնակարգ դպրոցներում, 41 %-ից ավելի (բարձր ցուցանիշ)՝ մնացած դպրոցներում:**

➢ Ստուգման ընթացքում տրված «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ **բոլոր դպրոցներում կազմել է մինչև 30%:**

➢ Ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ (հաշվարկվել է ըստ առարկաների և միջինացվել) բոլոր դպրոցներում նվազել է (ցածր ցուցանիշ), բացառությամբ՝ Բյուրեղավանի հիմնական դպրոցի:

➢ Առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցած բոլոր սովորողները անցել են մարզային փուլ՝ Արևիկի միջնակարգ և ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցներում: Առարկայական օլիմպիադաների մարզային փուլ անցած մասնակիցների տոկոսային թիվը տարածքային փուլին մասնակցած սովորողների թվի նկատմամբ կազմել է 50%-ից ավելի (բարձր ցուցանիշ)՝ Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցում,

40%՝ Գյումրու թիվ 37 ավագ դպրոցում, մինչդեռ՝ մարզային փուլում որոշակի հաջողություններ են արձանագրել միայն Սառնաղբյուրի միջնակարգ և Գյումրու հ. 37 ավագ դպրոցների սովորողները:

➢ Ստուգման ընթացքում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչների տոկոսային թիվը գնահատված ուսուցիչների թվի նկատմամբ Գյումրու հ. 37 ավագ դպրոցում կազմել է 25%, Երևանի հ. 22 հիմնական դպրոցում՝ 20%, Բյուրեղավանի հիմնական դպրոցում 14 %՝ 1-ական ուսուցիչներ, իսկ մյուս դպրոցներում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչներ չկան:

➢ Ստուգումների ընթացքում բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ: Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցում խախտումների թիվը 3-ն է, մյուս դպրոցներում՝ 3-ից ավելի:

Տնօրենների գնահատման արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 12).



Գծապատկեր 12

Տնօրենների գործունեության գնահատման արդյունքում գրանցված ցուցանիշներն են հիմնականում՝ «Լավ» (Բյուրեղավանի հ/դ, Երևանի հ.21 հ/դ, Ամասիայի մ/դ, Սառնաղբյուրի մ/դ, Երևանի հ.22 մ/դ,Գյումրու հ.37 ա/դ, Արևիկի մ/դ,) և «Բավարար» (ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ա/դ, Մուսալեռի մ/դ), ինչը ենթադրում է, որ կրթական գործընթացի կազմակերպման որակն ունի բարելավման կարիք բոլոր գնահատված դպրոցներում:

Չափանիշ 4. Կառավարման խորհուրդ

Դպրոցի կառավարման խորհրդի գնահատումն իրականացվել է ձևաթղթի «Կառավարման խորհուրդ» հավելվածի համաձայն: Հավելվածում ներառված բնութագրիչները բխում են դպրոցի կառավարման խորհրդի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթներից: Մասնավորապես՝

- Դպրոցի կառավարման խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացրել է ընթացիկ վերահսկողություն.
- Խորհուրդը քննարկել է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները.
- Խորհուրդը մասնակցել է դպրոցի արտաքին գնահատմանը, քննարկել է ներքին և արտաքին գնահատման արդյունքները.
- Խորհուրդը վերահսկել է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը.
- Խորհուրդը լիազորված մարմին է ներկայացրել դպրոցի գործունեության վերաբերյալ առաջարկություններ.
- Խորհրդի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը:

Կառավարման խորհուրդը գնահատվել է հետևյալ սանդղակի համաձայն. 72-67 միավոր՝ «Գերազանց», 66-59՝ «Շատ լավ», 58-48 ՝ «Լավ», 47-35 ՝ «Բավարար», մինչև 34՝ «Անբավարար»:

Ըստ գնահատման չափանիշների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցում՝ 55, իսկ ամենացածրը՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում՝ 11: Ստուգված դպրոցներում «Կառավարման խորհրդի» գործունեության արդյունքները դիագրամի տեսքով ներկայացված են գծապատկեր 13-ում:



Գծապատկեր 13

Կառավարման խորհրդի գործունեության գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

- Դպրոցի կառավարման խորհրդի կողմից տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն իրականացվել է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ Երևանի հ. 21 հիմնական և Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, վերահսկողությունն իրականացվել է տարեկան մեկ անգամ՝ Երևանի հ. 22 հիմնական, Արևիկի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում: Բյուրեղավանի հիմնական, Ամասիայի ու Մուսալեռի միջնակարգ դպրոցներում կառավարման խորհրդի կողմից տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն չի իրականացվել: ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցը կառավարման խորհուրդ չունի:
- Կառավարման խորհրդի կողմից դպրոցի տնօրենին կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ հանձնարարականների կամ առաջարկությունների տրման անհրաժեշտություն չի եղել Արևիկի և Ամասիայի միջնակարգ դպրոցներում, հանձնարարականների (առաջարկությունների) կատարողականը քննարկվել է՝ Գյումրու հ. 37 ավագ, Երևանի հ. 21 հիմնական և Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, կատարողականը չի քննարկվել Երևանի հ. 22 հիմնական դպրոցում և հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել Բյուրեղավանի հիմնական և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում:
- Դպրոցի կառավարման խորհրդի կողմից դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ Երևանի հ. 21, Բյուրեղավանի հիմնական և Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, իսկ մյուս դպրոցներում (Գյումրու հ. 37 ավագ, Երևանի հ. 22 հիմնական և Արևիկի, Ամասիայի և Մուսալեռի միջնակարգ) վերահսկողությունն իրականացվել է տարեկան մեկ անգամ:
- Կառավարման խորհուրդը քննարկել է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները՝ Երևանի հ. 21 հիմնական և Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում, հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել Երևանի հ. 22 հիմնական և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, իսկ մյուս դպրոցներում (Գյումրու հ. 37 ավագ, Բյուրեղավանի հիմնական, Արևիկի և Ամասիայի

միջնակարգ) հանձնարարականների (առաջարկությունների) տրման անհրաժեշտություն չի եղել:

- Դպրոցի կառավարման խորհուրդը բոլոր դպրոցներում քննարկել է դպրոցի ներքին և արտաքին գնահատման արդյունքները, բացի Մուսալեռի միջնակարգ դպրոցից:
- Դպրոցի կառավարման խորհրդի կողմից դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացվել է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ Երևանի հ. 21 և Բյուրեղավանի հիմնական դպրոցներում: Վերահսկողությունն իրականացվել է տարեկան 1 անգամ՝ Երևանի հ. 22 հիմնական, Սառնաղբյուրի, Արևիկի և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, չի իրականացվել՝ Գյումրու թիվ 37 ավագ և Ամասիայի միջնակարգ դպրոցներում:
- Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում կառավարման խորհուրդը դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին առաջարկություններ ներկայացրել է 2 և ավելի անգամ՝ Երևանի հ. 21 հիմնական դպրոցում, առաջարկություններ ներկայացրել է մեկ անգամ՝ Սառնաղբյուրի միջնակարգ և Երևանի հ. 22 հիմնական դպրոցներում, առաջարկություններ չի ներկայացրել՝ Բյուրեղավանի հիմնական, Արևիկի, Ամասիայի, Մուսալեռի միջնակարգ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում:
- Կառավարման խորհրդի գործունեությանը վերաբերող, կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել Բյուրեղավանի և Երևանի հ. 22 հիմնական դպրոցներում:

Կառավարման խորհրդի գնահատման արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 14).



Գծապատկեր 14

Դպրոցի կառավարման խորհրդի գործունեությունը ուղղակիորեն առնչվում է տնօրենի գործունեության հետ: Այդ մասին են վկայում նաև գնահատման արդյունքները:

Կորելյացիոն կապ է հաստատվել դպրոցների կառավարման խորհուրդների և տնօրենների գնահատականների միջև: Կորելյացիայի գործակիցը ստացվել է 0.7, ինչը վկայում է այն մասին, որ տնօրենները և կառավարման խորհուրդները համագործակցում են: Որտեղ համեմատաբար բարձր է գնահատված տնօրենը, համեմատական կարգով բարձր է գնահատված նաև կառավարման խորհուրդը: Ինչպես արտահայտված է ստորև բերված գծապատկերում՝ տնօրենների և կառավարման խորհուրդների գնահատականներն արտահայտող կորերը գրեթե միանման են փոփոխվում:



Չափանիշ 5: Ուսումնական միջավայր

Այս չափանիշի համար հիմք են հանդիսացել ձևաթղթի «Ուսումնական միջավայր» հավելվածի գնահատման արդյունքները: Դպրոցի ուսումնական միջավայրի գնահատումն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

- դպրոցի շենքային պայմաններ
- համակարգչային կաբինետ
- լաբորատորիաներ
- գրադարան
- մարզադահլիճ
- դասագրքեր
- ծրագրեր, ուսումնամեթոդական նյութեր:

Ուսումնական միջավայրը գնահատվել է հետևյալ սանդղակի համաձայն. 49-45 միավոր՝ «Գերազանց», 44-40՝ «Շատ լավ», 39-28 ՝ «Լավ», 27-15՝ «Բավարար», մինչև 15՝ «Անբավարար»:

Ըստ գնահատման չափանիշների՝ ամենաբարձր արդյունքը գրանցվել է ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ դպրոցում (49), իսկ ամենացածրը՝ Երևանի հ. 22 հիմնական

դպրոցում (21): Ստուգված դպրոցներում «Ուսումնական միջավայրի» գնահատման արդյունքները դիագրամի տեսքով ներկայացված են գծապատկեր 16-ում:



Գծապատկեր 16

Ուսումնական հաստատությունների ուսումնական միջավայրի գնահատման արդյունքում ունենք հետևյալ պատկերը.

➢ Ֆիզիկական միջավայրը գրավիչ է, հարմարեցված և մատչելի բոլոր սովորողների ու մանկավարժների համար՝ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Գյումրու թիվ 37 ավագ, Երևանի հ. 21 հիմնական և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում, անհրապույր է՝ Երևանի հ. 22 և Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի, Արևիկի և Ամասիայի միջնակարգ դպրոցներում:

➢ Համակարգչային կաբինետը կահավորված է գործող համակարգիչներով, այլ էլեկտրոնային սարքերով, կանոնավոր անցկացվում են էլեկտրոնային դասեր՝ Երևանի հ. 21, Բյուրեղավանի հիմնական, Սառնաղբյուրի, Ամասիայի և Մուսալեռի միջնակարգ, ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Գյումրու թիվ 37 ավագ դպրոցներում: Արևիկի միջնակարգ դպրոցում համակարգիչները հին սերնդի են, էլեկտրոնային դասեր հազվադեպ են անցկացվում, իսկ Երևանի հ. 22 հիմնական դպրոցում համակարգչային կաբինետը չի գործում:

➢ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ և Ամասիայի միջնակարգ դպրոցներում կանոնավոր գործում են նյութատեխնիկական հագեցվածությամբ լաբորատորիաներ, Գյումրու թիվ 37 ավագ, Արևիկի և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում լաբորատորիաների գույքը հնամաշ է, արդյունավետ չեն գործում: Մյուս դպրոցներում լաբորատորիաներ չկան կամ չեն գործում:

➢ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում գրադարանը հագեցած է անհրաժեշտ ուսումնական և գեղարվեստական գրականությամբ, ընթերցասրահը հարմարավետ է կահավորված և կանոնավոր է գործում: Գրադարանը թերհագեցած է, ընթերցասրահը փոքր է, անհարմարավետ՝ մյուս 7 դպրոցներում:

➢ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Ամասիայի և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում մարզադահլիճը բարեկարգ է, հագեցած է մարզագույքով, բավարարում է բոլոր դասարանների ուսումնական պարապմունքների համար: Մարզադահլիճն անբարեկարգ է, չի բավարարում բոլոր դասարանների ուսումնական պարապմունքների համար՝ մյուս 6 դպրոցներում:

➢ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Գյումրու հ. 37 ավագ, Սառնաղբյուրի, Արևիկի, Ամասիայի միջնակարգ, Երևանի հ. 21 և Երևանի հ. 22 հիմնական դպրոցներում բոլոր սովորողներն ապահովված են դասագրքերով, իսկ Բյուրեղավանի հիմնական և Մուսալեռի միջնակարգ դպրոցներում սովորողների մինչև 5%-ը չունեն անձնական դասագրքեր:

➢ ՃՇՀԱՀ Մ. Աբեղյանի անվան ավագ, Գյումրու հ. 37 ավագ, Արևիկի և Ամասիայի միջնակարգ, Երևանի հ. 21 և Բյուրեղավանի հիմնական դպրոցներն ապահովված են անհրաժեշտ առարկայական ծրագրերով և ուսումնամեթոդական նյութերով, իսկ Երևանի հ. 22 հիմնական, Սառնաղբյուրի միջնակարգ դպրոցներում առկա են անհրաժեշտ առարկայական ծրագրերը, սակայն ուսումնամեթոդական նյութերը սակավ են:

Ուսումնական միջավայրի գնահատման արդյունքները համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 17).



Գծապատկեր 17

Կրթության որակը հաճախ պայմանավորված է ոչ միայն մասնագիտական, այլ նաև ուսումնական միջավայրով, իսկ ուսումնական միջավայրի բարեկեցությունը անմիջական կապ ունի դպրոցի ֆինանսավորման և կառավարման հետ, հետևաբար այս չափանիշով դպրոցների գնահատման արդյունքները պետք է համընկնեին «Տնօրեն» և «Կառավարման խորհուրդ» չափանիշներով գնահատման արդյունքների հետ, ինչը նկատելի չէ:

Կորելյացիոն կապ է հաստատվել տնօրենների և դպրոցների ուսումնական միջավայրի գնահատականների միջև: Կորելյացիայի գործակիցը ստացվել է -0.6: Սա նշանակում է՝ որտեղ կրթական գործընթացի որակի տեսանկյունից բարձր է գնահատվել տնօրենը, այնտեղ ուսումնական միջավայրը անհրապույր է:

Նույն պատկերն ունենք կառավարման խորհուրդների և դպրոցների ուսումնական միջավայրի գնահատականների դեպքում: Նշված գործակիցը ստացվել է -0.3: Ինչը նշանակում է՝ կրթության որակի տեսանկյունից համեմատաբար լավ աշխատող կառավարման խորհուրդներ ունեցող դպրոցներն ունեն անհրապույր ուսումնական միջավայր:

Այդ մասին են վկայում նաև ստորև բերված գծապատկերները: Թվարկված կորերը միանման չեն փոփոխվում:



Գծապատկեր 18



Գծապատկեր 19

Այսպիսով, ըստ չափանիշների կշռավորման և գնահատման (մինչև 39 միավոր՝ «Անբավարար», 40-55 միավոր՝ «Բավարար», 56-70 միավոր՝ «Լավ», 71-85 միավոր՝ «Շատ լավ», 86-100 միավոր՝ «Գերազանց») ունենք հետևյալ պատկերը՝



«Լավ» արդյունք է գրանցվել Բյուրեղավանի հիմնական դպրոցում, «Անբավարար» արդյունք՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցում:

«*Ծնողի հարցաթերթիկի*» *արդյունքների վերլուծություն*

Ստուգման ընթացքում գործածվել է գնահատման ձևաթուղթ՝ ծնողի հարցաթերթիկ, որտեղ ներառված հարցադրումների՝ բնութագրիչների միջոցով VII-XI դասարանների աշակերտների ծնողների կողմից գնահատվել է դպրոցի գործունեությունը:

Սույն վերլուծությունը նպատակ ունի ներկայացնել վերոնշյալ դպրոցների կրթական և դաստիարակչական գործընթացների նկատմամբ ծնողների բավարարվածության աստիճանը՝ հիմք ընդունելով անան հարցման սկզբունքով նրանց կողմից հարցաթերթիկներում կատարված նշումները:

Հարցմանը մասնակցել է 601 ծնող: Յուրաքանչյուր ծնողի տրվել է 1 հարցաթերթ՝ բաղկացած 20 հարցից՝ 3 ենթադրյալ պատասխաններով. այո, մասամբ/երբեմն, ոչ: Հաշվի առնելով, որ հարցմանը մասնակցել է VII-XI դասարանների սովորողների ծնողների միայն մի մասը, հաշվարկներ կատարելիս մասնակիցների ընդհանուր թիվը համարել ենք 100%: Հարցաթերթի բոլոր հարցադրումներին տրված պատասխանների տոկոսային համամասնությունները ստացվել են ըստ տրված պատասխանների համախմբման և միջինացման:

Հարցաթերթիկում ներառված 20 հարցերը դասակարգվել են ըստ հետևյալ խմբերի.

- **Կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող ցուցանիշներ**

✓ Ծանոթ եմ դպրոցի և իմ միջև կնքված պայմանագրով սահմանված՝ իմ և դպրոցի իրավունքներին և պարտականություններին:

✓ Դպրոցի կանոնադրությանն ու ներքին կարգապահական կանոններին ինձ ծանոթացրել են:

✓ Միշտ մասնակցում եմ ծնողական ժողովներին:

✓ Մշտապես տեղեկացվում եմ ծնողական խորհրդի որոշումների մասին:

✓ Հետաքրքրվում եմ դպրոցի առօրյայով:

✓ Հեշտորեն եմ հաղորդակցվում երեխայիս դասավանդող բոլոր ուսուցիչների հետ՝ ըստ անհրաժեշտության:

✓ Երեխայիս դասարանի դասղեկը մշտապես հետևում է երեխաների կարգապահությանն ու հաճախումներին:

✓ Դպրոցում պաշտպանված են երեխայիս իրավունքներն ու անվտանգությունը:

✓ Տնօրենը ճիշտ է կազմակերպում դպրոցի կրթադաստիարակչական գործընթացը:

✓ Տնօրենը նպաստում է դպրոցի զարգացմանը:

- **Կրթական ծրագրի յուրացմանը նպաստող ցուցանիշներ**

✓ Իմ երեխայի դասարանում սովորողները համերաշխ են:

✓ Իմ երեխային դասավանդող բոլոր ուսուցիչները հմուտ են:

✓ Յուրաքանչյուր երեխայի նկատմամբ դպրոցում ցուցաբերվում է անհատական մոտեցում:

✓ Իմ երեխան տնային առաջադրանքները կատարում է հեշտությամբ և ինքնուրույն:

✓ Իմ երեխան վճարովի հիմունքներով իր ուսուցիչների մոտ լրացուցիչ պարապում է:

- **Ծնողի բավարարվածությունը դպրոցի գործունեությունից նկարագրող ցուցանիշներ**

✓ Իմ երեխան հաճույքով է հաճախում դպրոց:

✓ Իմ երեխային գնահատում են նրա կարողություններին համապատասխան:

✓ Կարևորում եմ երեխայիս՝ դպրոցում ստացած գիտելիքները:

✓ Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտ:

✓ Հնարավորության դեպքում կընտրեի այլ դպրոց:

<u>Կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող ցուցանիշներ</u>

Կրթական գործընթացի կազմակերպում ասելով տվյալ դեպքում հասկանում ենք՝ դպրոցի և ծնողի միջև կնքված պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտականությունները, ծնողների մասնակցությունը ծնողական ժողովներին և նրանց տեղեկացվածությունը ծնողական խորհրդի որոշումներին, ուսուցիչ-սովորող փոխհարաբերությունները և սովորողների իրավունքների ու պարտականությունների պաշտպանվածությունը:

Հարցերին, թե որքանով են ծնողները ծանոթացել դպրոցի կանոնադրությանը և ներքին կարգապահական կանոններին, ինչպես նաև երկուստեք՝ իրավունքներին և պարտականություններին, հարցվածների 90%-ը՝ դրական, 82%-ը՝ մասամբ, իսկ 2%-ը բացասական պատասխան են տվել:

Իսկ ահա ծնողական ժողովներին մասնակցում, ծնողական խորհրդի որոշումներին տեղեկացված և դպրոցի առօրյայով հետաքրքրված են ծնողների 78%-ը, մասամբ՝ 20%-ը և հետաքրքրված չեն 2%-ը: Այս ցուցանիշը ստացվել է «Միշտ մասնակցում եմ ծնողական ժողովներին» և «Մշտապես տեղեկացվում եմ ծնողական խորհրդի որոշումների մասին» հարցերի արդյունքները միավորելու և միջինացնելու արդյունքում:

Հետաքրքրական է, որ հարցմանը մասնակցած ծնողների 2%-ի մոտ բացասական արձագանքները համընկնում են:



Գծապատկեր 21

Ծնողները պատասխանել են նաև հետևյալ հարցերին, թե արդյո՞ք հեշտորեն է ստացվում շփումը իրենց և երեխային դասավանդող ուսուցիչների հետ, արդյո՞ք ուսուցիչները հետևում են աշակերտների կարգապահությանը/հաճախումներին, և պաշտպանված են արդյո՞ք աշակերտների իրավունքները/պարտականությունները: Արդյունքում ստացվել է, որ ծնողների 90%-ի մոտ շփումը ուսուցիչների հետ հեշտորեն է ստացվում, 9.8%-ի մոտ՝ մասամբ, իսկ 0.2%-ի մոտ ընդհանրապես չի ստացվում: Իսկ ահա մյուս հարցումներին համապատասխանաբար տրվել են հետևյալ պատասխանները՝ 95.5%-ը՝ դրական, 4.4%-ը՝ մասամբ, 0.1%-ը՝ բացասական և հաջորդը՝ 91.6%-ը՝ դրական, 8%-ը՝ մասամբ և 0.4%-ը պատասխանել է՝ ոչ:

Հարցաթերթերում ներառված այն հարցերին, թե արդյո՞ք տնօրենները ճիշտ են կազմակերպում կրթադաստիարակչական գործընթացը և նպաստում են արդյո՞ք դպրոցի զարգացմանը, ծնողների 93%-ը դրական արձագանք է տվել, 5.5%-ը՝ մասամբ, իսկ 1.5%-ը պատասխանել է՝ ոչ: Այս ցուցանիշը ստացվել է նշված երկու հարցերի պատասխանները միավորելու և միջինացնելու արդյունքում:

Կրթական գործընթացի կազմակերպմանը վերաբերող բոլոր ցուցանիշների համախմբման և միջինացման արդյունքում պարզվել է՝ 90% ծնողների դրական, 9% մասամբ և 1% ծնողների բացասական արձագանք:

Կրթական ծրագրի յուրացմանը նպաստող ցուցանիշներ

Կրթական ծրագրի յուրացմանը նպաստող ցուցանիշներով ծնողները գնահատել են դասարանում սովորողների համերաշխությունը, ուսուցչական կազմի հմտությունները, սովորողների կողմից աշխատանքների կատարման դյուրինությունը և ինքնուրույնությունը, և լրացուցիչ պարապունքների անհրաժեշտությունը, որոնք նպաստում են կրթական ծրագրի յուրացմանը:

Ծնողների 86%-ի կարծիքով՝ իրենց երեխայի դասարանում սովորողները համերաշխ են, 12%-ը մասամբ, իսկ 2%-ը կարծում են, թե դասարանում մթնոլորտը երեխաների միջև լարված է: Հաջորդ հարցին, թե արդյո՞ք դասավանդող բոլոր ուսուցիչները հմուտ են, ծնողների 79%-ը համաձայնել է, 16%-ը պատասխանել է՝ մասամբ, 2%-ը՝ դժգոհ է, իսկ 3%-ը՝ չի պատասխանել: «Յուրաքանչյուր երեխայի նկատմամբ դպրոցում ցուցաբերվում է անհատական մոտեցում» հարցին, ծնողների 74%-ը դրական պատասխան է տվել, 21.5%-ը պատասխանել է՝ մասամբ և 4.5%-ը բացասական է արձագանքել:



Գծապատկեր 22

Կրթական ծրագրի յուրացմանը վերաբերող հիմնական հարցերից մեկին՝ «Իմ երեխան տնային առաջադրանքները կատարում է հեշտությամբ և ինքնուրույն», ծնողների 62%-ը դրական պատասխան է տվել, 36%-ը կարծում է, որ երեխան մասամբ է կարողանում առաջադրանքները կատարել և 2%-ը՝ չի կարողանում: Դրանից հետևում է, որ սովորողների 38%-ը (36%+2%) չի կարողանում կամ դժվարությամբ է կարողանում հաղթահարել տնային

առաջադրանքները: Միևնույն ժամանակ, այն հարցին, թե երեխաները լրացուցիչ վճարովի հիմունքներով պարապու՞մ են իրենց ուսուցիչների մոտ, ծնողների 78%-ը տվել է բացասական պատասխան, 13%-ը՝ մասամբ և 9%-ը՝ չեն ժխտել, ինչից կարելի է եզրակացնել, որ սովորողների միայն 22%-ն (13%+9%) է լրացուցիչ վճարովի հիմունքներով պարապում: Ստացված 38% և 22% ցուցանիշների համադրումից հետևում է, որ 16% սովորողների մոտ առկա են խնդիրներ:

Այսպիսով, կրթական ծրագրի յուրացմանը նպաստող բոլոր ցուցանիշները համախմբելով և միջինացնելով՝ նշված ցուցանիշի համար կունենանք՝ 62% դրական, 20% մասամբ և 18% բացասական արձագանք:

<u>Ծնողի բավարարվածությունը դպրոցի գործունեությունից</u>

«Ծնողի բավարարվածությունը դպրոցում տեղի ունեցող գործընթացներից» ցուցանիշը ներկայացնում է ծնողների գնահատականը՝ երեխաների դպրոց հաճույքով հաճախելուց, երեխաների կարողությունների ճիշտ գնահատումից, դպրոցում ստացած գիտելիքների կարևորությունից, դպրոցում տիրող բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտից և հնարավորության դեպքում՝ այլ դպրոցի ընտրությունից:

Պնդմանը, թե «Հնարավորության դեպքում կընտրեի այլ դպրոց», ծնողների շուրջ 87%-ը պատասխանել է՝ ոչ, ինչը նշանակում է, որ նրանց զգալի մասի բավարարվածության մակարդակը բարձր է: Սակայն, եթե պատասխանների տոկոսային համամասնությունները դիտարկենք առանձին դպրոցների օրինակով, ապա հետաքրքրական է ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի մ/դ-ը: Չնայածայն հանգամանքին, որ դպրոցում սովորող երեխաների ծնողները մի շարք ցուցանիշների մասով տվել են «Մասամբ» կամ բացասական պատասխան, այնուամենայնիվ նրանք չեն ցանկանում ընտրել այլ դպրոց:

«Երեխայի կողմից դպրոցում ստացած գիտելիքների կարևորությունը» և «Ուսուցիչների կողմից աշակերտներին, իրենց կարողություններին համապատասխան գնահատումը» հարցերին դրական պատասխանների տոկոսային համամասնությունը համապատասխանաբար կազմել են 94% և 87%: Իսկ ահա դպրոցում տիրող բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտը և երեխաների՝ դպրոց սիրով հաճախելու ցուցանիշը 86.5% է: Արդյունքը ստացվել է համապատասխան հարցերի պատասխանների միավորման և միջինացման միջոցով:



Գծապատկեր 23

Այսպիսով, համախմբելով 3-րդ խմբի բոլոր ցուցանիշները և միջինացնելով արդյունքները, ստացել ենք, որ ծնողների 88.75%-ը բավարարված է դպրոցի գործունեությունից, 9%-ը՝ մասամբ և 2.25%-ը բավարարված չեն:

Ամփոփելով 9 դպրոցներում ծնողների կողմից անան հարցման սկզբունքով՝ «Ծնողի հարցաթերթի» լրացման և մեր կողմից կատարված բնութագրիչների խմբավորման և միջինացման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը.

Հ/Հ	Ցուցանիշներ	Այո	Մասամբ	Ոչ
1.	**Կրթական գործընթացի կազմակերպման ցուցանիշ**	**90%**	**9%**	**1%**
2.	**Կրթական ծրագրի յուրացմանը նպաստող ցուցանիշ**	**62%**	**20%**	**18%**
3.	**Դպրոցի գործունեությունից՝ ծնողի բավարարվածության ցուցանիշ**	**88.75%**	**9%**	**2.25%**

Ստացված ցուցանիշներից կարող ենք ենթադրել, որ, չնայած այն հանգամանքին, որ հարցմանը մասնակցած ծնողների միայն 62%-ն է գոհ դպրոցներում կրթական ծրագրերի յուրացման մակարդակից, այնուամենայնիվ, նրանք դպրոցի նկատմամբ ունեն բավական բարձր վստահության մակարդակ, մասնավորապես՝ կրթական գործընթացի կազմակերպումից՝ 90% և 88,75% բավարարվածություն դպրոցի գործունեությունից: Իսկ ահա «մասամբ» և «ոչ» հարցադրումների պատասխանները ցույց են տալիս, որ թե՛ ուսուցչական անձնակազմերը, թե՛ դպրոցների տնօրինությունները՝ անելիքներ ունեն:

Հարցման արդյունքների ամփոփումից հետևում է, որ, ընդհանուր առմամբ, ծնողները գոհ են դպրոցների աշխատանքից և դրական են վերաբերվում տեղի ունեցող գործընթացներին, մասնավորապես՝ սովորող-ուսուցիչ փոխհարաբերություններին, դպրոց-ուսուցչական անձնակազմ աշխատանքներին, աշակերտների ստացած գիտելիքների մակարդակին, նրանց հաճախումներին և կարգապահությանը, տնօրենների կողմից կրթադաստիարակչական գործընթացների կազմակերպմանը, դպրոցում տիրող բարոյահոգեբանական բարենպաստ մթնոլորտին և մի շարք այլ ցուցանիշների:

Եզրակացություն

Հիերարխիկ վերլուծության մեթոդի կիրառմամբ ստուգված դպրոցները համեմատվել են ըստ կրթության որակի նախապես ընտրված չափանիշների՝ միաժամանակ հաշվի առնելով ըստ բոլոր չափանիշների գնահատման արդյունքները և դրանց կարևորությունը:

Կրթության որակի բոլոր չափանիշներով գնահատման արդյունքների համեմատման և նորմավորման արդյունքում ստացել ենք հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 24): Գծապատկերը ցույց է տալիս, թե մեկ ամբողջության մեջ հաստատություններից յուրաքանչյուրը կրթական գործընթացի արդյունավետության տեսանկյունից ինչ ազդեցություն ունի[2]:



Գծապատկեր 24

[2] Ինչպես արտահայտված է գծապատկեր 24-ում՝ Բյուրեղավանի հ/դ-ի ազդեցությունը կրթական գործընթացի արդյունավետության տեսանկյունից 100%-ի նկատմամբ կազմել է 13%, իսկ Մուսալեռի մ/դ-ի դեպքում՝ 7.5%:

Ինչպես կարելի է նկատել գծապատկերից, ուսումնական հաստատությունների կրթության որակի գնահատման (նախանշված չափանիշներով) և դրանց արդյունքների համեմատության արդյունքում առաջին տեղում է Բյուրեղավանի հիմնական դպրոցը, իսկ վերջին տեղում՝ Մուսալեռի միջնակարգ դպրոցը: Կրթության որակի վերջնական գնահատման վրա ազդել են բոլոր չափանիշներով գնահատման արդյունքները: Դպրոցների կրթության որակի գնահատման արդյունքներն ըստ յուրաքանչյուր չափանիշի՝ ներկայացված են գծապատկեր 25-ում:



Գծապատկերում ակնառու ներկայացված է, թե համեմատման արդյունքում դպրոցներից յուրաքանչյուրն ըստ յուրաքանչյուր չափանիշի ո՞ր տեղն է զբաղեցնում 9-յակում, և այդ չափանիշներից յուրաքանչյուրը որքանո՞վ է ազդել դպրոցի կրթության որակի ընդհանուր գնահատականի վրա:

Այսպիսով, ամփոփենք արդյունքներն ըստ խնդիրների՝

Գրավոր աշխատանքների արդյունքներ

✓ «Հայոց լեզու» առարկայի թելադրության և «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի միջոցով վերոնշյալ 9 դպրոցներում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգման արդյունքում միջին գնահատականները կազմել են համապատասխանաբար 5 և 4

միավոր: Սակայն, «Հայոց լեզու» առարկայի թելադրության դեպքում դպրոցներից 2-ում, «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքի դեպքում՝ 4 դպրոցներում այդ ցուցանիշը կազմել է 4 միավորից՝ պարտադիր նվազագույնից ցածր:

✓ ԿՏՄ կողմից տրված գրավոր աշխատանքների և նույն սովորողների նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների գնահատականների համադրման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը՝ «Հայոց լեզու» առարկայի թելադրության դեպքում «Գերազանց» են գնահատվել գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների 11%-ը, «Անբավարար»՝ 35%-ը, մինչդեռ նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից «Գերազանց» են գնահատվել նույն սովորողների 14%-ը, «Անբավարար»՝ 5%: «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքից «Գերազանց» են գնահատվել գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների 5%-ը, «Անբավարար»՝ 47%-ը, մինչդեռ նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքից «Գերազանց» են գնահատվել նույն սովորողների 12%-ը, «Անբավարար»՝ 6%:

Սովորողների տարեկան գնահատականները հիմնականում համընկնում են նախորդ տարվա ամփոփ գրավոր աշխատանքների գնահատականների հետ: Համադրման պատկերը հակասական է հատկապես «Անբավարար» գնահատված սովորողների պարագայում: Ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ ուսուցիչների կողմից սովորողների գիտելիքների գնահատումը չի իրականացվում հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան:

Ուսուցիչներ

➢ Գնահատված ուսուցիչների դասավանդած դասարանների ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ «Հայոց լեզու» առարկայի դեպքում աճել է 9 դպրոցներից 6-ում, «Մաթեմատիկա» առարկայի դեպքում՝ 5 դպրոցներում:

➢ Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից գնահատված ուսուցիչների դասավանդած դասարաններում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը «Հայոց լեզու» առարկայի դեպքում կազմել է 41%-ից ավելի 2, «Մաթեմատիկա» առարկայի դեպքում՝ 6 դպրոցներում:

➢ Ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատված այն դասարանների սովորողների միջին

տոկոսային թվի նկատմամբ (որտեղ տրվել են գրավոր աշխատանքներ և դասավանդել են նշված մասնագետները) «Հայոց լեզու» առարկայի դեպքում նվազել է՝ 5, «Մաթեմատիկա» առարկայի դեպքում՝ բոլոր 9 դպրոցներում:

➢ «Հայոց լեզու» առարկայի գնահատված ուսուցիչների դասավանդած դասարանների սովորողները օլիմպիադաների տարածքային փուլում մասնակիցներ չեն ունեցել 3 դպրոցներում, մարզային փուլ են անցել, սակայն հաջողություն չեն ունեցել 4 դպրոցում: «Մաթեմատիկա» առարկայի գնահատված ուսուցիչների դասավանդած դասարանների սովորողները օլիմպիադայի տարածքային փուլում մասնակիցներ չեն ունեցել 3 դպրոցներում: Տարածքային փուլին մասնակցել են, սակայն մարզային փուլ չեն անցել՝ 3 դպրոցներում:

➢ «Հայոց լեզու» առարկայի գնահատված ուսուցիչները գիտամանկավարժական հոդվածներ չունեն՝ 3 դպրոցներում, չեն մասնակցել կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների՝ 6 դպրոցներում: «Մաթեմատիկա» առարկայի գնահատված ուսուցիչները գիտամանկավարժական հոդվածներ չունեն դպրոցներից 5-ում, չեն մասնակցել կրթական ծրագրերի, կոնֆերանսների, համաժողովների՝ 6 դպրոցներում:

➢ Հայոց լեզվի ուսուցիչների գնահատման միջին արդյունքները հիմնականում «Շատ լավ», և «Լավ» են: Մաթեմատիկայի ուսուցիչների գնահատման արդյունքում 50 %-ից ավելի դպրոցներում գրանցվել է «Բավարար», 1 դպրոցի դեպքում նաև «Անբավարար» արդյունք:

Ինչպես նկատելի է՝ արդյունքները ավելի խնդրահարույց են «Մաթեմատիկա» առարկայի դեպքում:

Տնօրեն

➢ Ցածր (4-6) առաջադիմությամբ սովորողների տոկոսային թիվը նախորդ երկու կիսամյակներից առաջինի նկատմամբ երկրորդում աճել է 3 դպրոցներում:

➢ Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***3-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են պետական ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) 3 դպրոցներում: Ավարտման ցուցանիշը՝ ըստ կրթական ***2-րդ աստիճանի*** կազմել է 100%-ից ցածր (նախորդ ուսումնական տարում եղել են ավարտական քննություններից անբավարար ստացած սովորողներ) 5 դպրոցներում:

➢ Քննություններին (միասնական, բուհական, միջազգային) մասնակցած սովորողներից «Անբավարար» են ստացել 20%-ից ավելին՝ 1 դպրոցում:

➢ Նախորդ ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների տոկոսային թիվը սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է 5%-ից ավելի՝ 1 դպրոցում:

➢ Ստուգման ընթացքում տրված «Հայոց լեզվի» թելադրության արդյունքում «Անբավարար» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել է **41%-ից ավելի (ցածր ցուցանիշ) 3 դպրոցներում,** «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների արդյունքում՝ **6 դպրոցներում:**

➢ Ստուգման ընթացքում տրված «Հայոց լեզվի» գրավոր աշխատանքների արդյունքում «Լավ» և «Գերազանց» ստացած սովորողների տոկոսային թիվը գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների ընդհանուր թվի նկատմամբ կազմել **է մինչև 30% (ցածր ցուցանիշ) 3 դպրոցներում,** «Մաթեմատիկայի» գրավոր աշխատանքների դեպքում՝ **բոլոր դպրոցներում:**

➢ Ստուգման ընթացքում տրված բոլոր գրավոր աշխատանքներից «Լավ» և «Գերազանց» գնահատականը պահպանած սովորողների միջին տոկոսային թիվը նախորդ կիսամյակում «Լավ» և «Գերազանց» գնահատական ստացած սովորողների միջին տոկոսային թվի նկատմամբ (հաշվարկվել է ըստ առարկաների և միջինացվել) նվազել է 8 դպրոցներում:

➢ Ստուգման ընթացքում «Շատ լավ» և «Գերազանց» գնահատված ուսուցիչներ չկան 6 դպրոցներում:

➢ Ստուգումների ընթացքում բոլոր դպրոցներում էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ:

Կառավարման խորհուրդ

➢ Դպրոցի կառավարման խորհրդի կողմից տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն չի իրականացվել 3 դպրոցներում:

➢ Կառավարման խորհրդի կողմից դպրոցի տնօրենին կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ տրված հանձնարարականների կատարողականը չի քննարկվել՝ 1, հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն չի տրվել՝ 2 դպրոցներում:

- Դպրոցի կառավարման խորհրդի կողմից դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է տարեկան մեկ անգամ՝ 5 դպրոցներում:
- Կառավարման խորհուրդը քննարկել է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները: Հանձնարարականի (առաջարկության) անհրաժեշտություն եղել է, սակայն հանձնարարական չի տրվել՝ 2 դպրոցներում:
- Դպրոցի կառավարման խորհուրդը չի քննարկել դպրոցի ներքին և արտաքին գնահատման արդյունքները՝ 1 դպրոցում:
- Դպրոցի կառավարման խորհրդի կողմից դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել՝ 2 դպրոցներում:
- Վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածում կառավարման խորհուրդը դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին առաջարկություններ չի ներկայացրել՝ 5 դպրոցներում:
- Կառավարման խորհրդի գործունեությանը վերաբերող, կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ արձանագրվել են՝ 6 դպրոցներում:

Ուսումնական միջավայր

- Ֆիզիկական միջավայրը անհրապույր է՝ 5 դպրոցներում:
- Համակարգչային կաբինետը չի գործում՝ 1 դպրոցում, համակարգիչները հին սերնդի են և էլեկտրոնային դասեր հազվադեպ են անցկացվում՝ 1 դպրոցում:
- Լաբորատորիաները արդյունավետ չեն գործում, գույքը հնամաշ է՝ 3 դպրոցներում: Լաբորատորիաներ չկան կամ չեն գործում՝ 4 դպրոցներում:
- Գրադարանը թերհագեցած է, ընթերցասրահը փոքր է և անհարմարավետ՝ 7 դպրոցներում:
- Մարզադահլիճն անբարեկարգ է, չի բավարարում բոլոր դասարանների ուսումնական պարապմունքների համար՝ 6 դպրոցներում:
- Սովորողների մինչև 5%-ը չունեն անձնական դասագրքեր՝ 2 դպրոցներում:
- Առկա են անհրաժեշտ առարկայական ծրագրերը, սակայն ուսումնամեթոդական նյութերը սակավ են՝ 2 դպրոցներում:

Առաջարկություններ

Ելնելով կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերլուծությունից առաջարկում ենք.

1. Գնահատված դպրոցների տնօրեններին՝

1) Բարելավել ձեր գործունեության գնահատման արդյունքները նշված չափանիշներին համապատասխան:

2) Աշխատանքներ տանել դպրոցում դասավանդման որակը բարձրացնելու ուղղությամբ՝ սովորողների գիտելիքների ելքային արդյունքները բարելավելու նպատակով:

3) Ելնելով դպրոցի հնարավորություններից՝ նպաստել դպրոցում կրթության որակի ապահովմանը:

4) Նպաստել ուսուցիչների մասնագիտական աճին ու զարգացմանը:

5) Համալրել դպրոցի նյութատեխնիկական բազան՝ ձեռք բերելով համապատասխան ռեսուրսներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարելավմանը:

6) Կրթության գործընթացի կազմակերպումն իրականացնել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

2. Կառավարման խորհուրդներին՝

1) Տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնել ընթացիկ վերահսկողություն առնվազն յուրաքանչյուր կիսամյակ:

2) Կրթության որակի բարձրացմանն ուղղված՝ դպրոցի տնօրենի կողմից իրականացված գործառույթների արդյունքների վերաբերյալ քննարկումներ կազմակերպել խորհրդի նիստերում:

3) Լսել դպրոցի տնօրենի հաղորդումը կրթության որակի բարձրացմանն ուղղված գործառույթների ուղղությամբ, ներկայացնել առաջարկություններ (հանձնարարականներ): Անդրադառնալ հանձնարարականների կատարողականին:

4) Մասնակցել դպրոցի արտաքին գնահատմանը, քննարկել ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

5) Իրականացնել վերահսկողություն դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ:

6) Դպրոցի գործունեության վերաբերյալ լիազորված մարմին ներկայացրել առաջարկություններ:

7) Խորհրդի գործունեությունը ծառայեցնել կրթության որակի ապահովմանը՝ առաջնորդվելով կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ:

3. Լիազոր մարմինների ղեկավարներին (ՀՀ ԿԳՄՍ նախարարին, ՀՀ մարզպետներին, Երևանի քաղքապետին)՝

հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին՝ քննարկել կրթական գործընթացի գնահատման արդյունքների վերլուծությունը, միջոցներ ձեռնարկել բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ:

4. Ուսուցիչներին՝

1) Աշխատել մասնագիտական աճի և զարգացման ուղղությամբ:

2) Դասավանդումն, այդ թվում գնահատումն իրականացնել հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան:

3) Բարելավել սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը հայոց լեզվից և մաթեմատիկայից:

4) Նպաստել տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություն ունեցող երեխաների հայտնաբերմանը:

ՌԳՍՊՎԳ վարչություն